«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԵԿՏՈՐ
ՊՐՈՖԵՍՈՐ Դ.Ե. ԽԻԹԱՐՅԱՆ
"31 մարտի 2023թ"

# ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

**Քրիստինա Արսենի Խառատյանի «Լոգոպեդական վաղ միջամտության մոդելը աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում» թեմայով ԺԳ.00.03 «Հատուկ մանկավարժություն» (Լոգոպեդիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

Հայտնի է, որ աուտիզմը արդի ժամանակաշրջանում ամենահաճախ ախտորոշվող զարգացման խանգարումներից է, որը բնորոշվում է շփման և հաղորդակցման, կրկնվող վարքագծային խնդիրներով և սոցիալիզացիայի սահմանափակմամբ: Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից հրապարակված ամենամյա տվյալները փաստում են, որ աուտիզմի համախտանիշ ունեցողների թիվը ներկայումս կտրուկ աճել է, մեծամասամբ, նաև գնահատման մեթոդների փոփոխությունների շնորհիվ, սակայն իրական աճի հարցն առայժմ անպատասխան է (J. Zeidan et al. 2022):

Ըստ աուտիզմի համախտանիշին վերաբերվող վիճակագրական հետազոտության տվյալների, ներկայումս յուրաքանչյուր հարյուրերորդ երեխան ունի աուտիզմի սպեկտրի խանգարում (ԱՍԽ կամ ASD), ընդ որում, այս տվյալներն անընդհատ թարմացվում են (C.Dyer 2010, H.Maisonneuve, D.Floret 2012, E.Fombonne et al. 2019,2021): Վերոնշյալ ցուցանիշներն ահազանգ են ամբողջ աշխարհի հետազոտողների և ոլորտի մասնագետների համար՝ առավել աչալուրջ լինելու աուտիզմի համախտանիշ ունեցող, մասնավորապես, ԱՍԽ ունեցող երեխաների սոցիալական՝ շփման և հաղորդակցման խնդիրների գնահատման և, հնարավորինս վաղ, լոգոպեդական միջամտության կազմակերպման համար:

Ներկայումս, ամերիկյան «Խոսք-լեզու-լսողություն» (ASHA) կազմակերպության կողմից տրամադրված վիճակագրական տվյալներին համապատասխան ԱՍԽ ախտորոշվում է բացառապես վարքային ախտանիշների հիման վրա, ճանաչողական

գործընթացների յուրօրինակ դրսևորումների արտահայտմամբ, որոնք երբեմն ուղեկցվում են մտավոր գործունեության դժվարություններով, հաղորդակցման նախաձեռնության պակասով, ինչի արդյունքում էլ գրեթե անհնար է դառնում նրանց սոցիալական հարմարումը: Սույն համախտանիշի վաղ և ճիշտ ախտորոշման գլխավոր նպատակներից է երեխայի զարգացման մանկավարժական գործընթացի վաղ և գրագետ մեթոդակազմով կազմակերպումը (К.Лебединская, О.Николская 1989, D.Williams, G.Goldstein, N.Minshew 2006, Е.Солдатенкова 2012, D.Loeb, E.Davis & T. Lee 2021):

Թեև վերջին տասը տարիների ընթացքում այս երեխաների վարքաբանական, հաղորդակցական, գնահատման և սոցիալական հարմարման խնդիրների կարգավորման համար ամբողջ աշխարհում կիրառելի են վալիդացված բազմաթիվ առանձին մեթոդներ և միջոցներ, այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում, աուտիզմի համախտանիշի հաղթահարման լոգոպեդական գործընթացում, շատ քիչ են գործածվում մեթոդական և նեղ մասնագիտական համալիր միջամտության մոտեցումներ ու մոդելներ: Ամբողջ աշխարհում ընդունված արդյունավետ գործող մոդելները հիմնված են վերականգնողական տարբեր կենտրոններում իրականացվող բազմամասնագիտական թիմային աշխատանք ներառող սկզբունքների վրա, որոնցում լոգոպեդական աշխատանքի դերը առանձնակի կարևորություն ունի: Մեր երկրում, սակայն, լոգոպեդական վաղ միջամտության այսպիսի մոդելները խիստ սակավաթիվ են, ինչով և պայմանավորված է Քրիստինա Արսենի Խառատյանի կողմից ներկայացված ատենախոսական թեմայի արդիականությունը (S.Rogers & G.Dawson 2009, И.Сухорукова 2012, С.Гринспен 2013, F.Affolter and Walter 2013, К.Харатян, Г.Овян 2019):

Մանկավարժական ժամանակակից մոտեցումների կիրառումը հնարավորություն է ստեղծում աուտիզմի հաղթահարման լոգոպեդական վաղ միջամտության գործընթացում մեթոդների և դրանց կիրառման մանկավարժական պայմանների առաջադրման ու ապահովման համար՝ շեշտադրելով երեխայի անհատական մոտեցման և պոտենցիալ հնարավորությունների հաշվառումը, ուսուցման վայրի, դիդակտիկայի և կիրառվող մեթոդակազմի սկզբունքայնությունը, ինչը դեռևս թերի օղակ է մեր համակարգում (P.Prelock, R.Paul & E.Allen 2011, K.Kharatyan, G.Hovyan 2021):

ԱՍԽ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում գործածվող լոգոպեդական վաղ միջամտության ժամանակակից մեթոդների և միջոցների առանձին կիրառումը խթանում է երեխայի զարգացմանը որոշակիորեն, սակայն պետք է շեշտադրել այս մեթոդների համակարգային մշակման անհրաժեշտությունը՝ ի նպաստ

աուտիզմ ունեցող երեխաների բազմակողմանի զարգացման և լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառմամբ վերոնշյալ աշխատանքների արդյունավետության բարձրացման (Е.Янушко 2011, Р.Лиф, Д.Макэкен 2016, Ք.Խառատյան, Գ.Հովյան 2020):

Ելնելով վերոնշյալից կարող ենք հավաստել, որ ատենախոսի կողմից առաջարկվող բացառիկ նոր մոտեցումը՝ լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառմամբ պահանջում է հատուկ մասնագետների սերտ համագործակցություն և խորհրդատվություն՝ ԱՍԽ ունեցող երեխաների հետ աշխատելու առավել նպաստավոր և սոցիալական միջավայրում հարմարվելու ուղիներ մշակելու համար (Ք.Խառատյան, Գ.Հովյան 2020, 2022):

Ելնելով հիմնախնդրի արդիականությունից, կոնկրետ նպատակից,հետազոտության վարկածից,գիտական նորույթից, տեսական և գործնական նշանակությունից կարելի է հաստատել, որ ԱՍԽ ունեցող երեխաների արդյունավետ լոգոպեդական վաղ միջամտության կազմակերպման համար անհրաժեշտ է աշխատանքը սկսել 0-3 տարեկան հասակում, երեխաների նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում և կիրառել աուտիզմի համախտանիշի հաղթահարման վաղ միջամտության համակարգային մոդել:

Մենք կարևորում ենք աուտիզմ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության՝ խոսքի և հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված համակարգային մոդելի մշակման ներկայացված ձևաչափը, քանզի ատենախոսը կարողացել է համակարգել աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների սոցիալական հարմարվողականության զարգացումը, աջակցել իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության գործընթացի կազմակերպմանը՝ ներգրավելով նրանց սոցիալական միջավայր, ընդլայնելով նրանց սոցիալական շփումը և զարգացնելով երեխաների էքսպրեսիվ բանավոր խոսքը: Ներկայացված ատենախոսությունում գրագետ և պատշաճ մակարդակով ներկայացված է հետազոտվող հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ժամանակակից մոտեցումները գիտամեթոդական գրականության մեջ և լոգոպեդական վաղ միջամտության պայմաններում, վերլուծված են իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության՝ հաղորդակցման միջոցների ձևավորման, կազմակերպման առանձնահատկությունները, որոնք համապատասխան մոդելի կիրառման պայմաններում նպաստում են նրանց սոցիալական շփման հնարավորությունների զարգացմանը: Ատենախոսի կողմից մշակված է ԱՍԽ ունեցող երեխաների խոսքի ձևավորմանն ու զարգացմանն ուղղված համակարգային մոդել, առաջադրված են լոգոպեդական վաղ միջամտության մանկավարժական

պայմաններ և փորձարարական ճանապարհով հիմնավորված է առաջարկվող մոտեցումների կիրառման արդյունավետությունը:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի աուտիզմ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառման տեսական հիմնավորումը՝ վերականգնողական հաստատություններում իրականացված հետազոտության արդյունքների վերլուծության և համադրման հիման վրա, քանի որ հեղինակի կողմից ներկայացված է համալիր լոգոպեդական ծրագիր: Կարծում ենք, որ աուտիզմ ունեցող երեխաների խոսքի և հաղորդակցման զարգացման առավել արդյունավետ մեթոդների, միջոցների, ինչպես նաև մանկավարժական պայմանների վերաբերյալ տեսական պատկերացումների այսպիսի ընդլայնումը հնարավորություն կտա մշակել տեսական հետազոտությունների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը և համալրել լոգոպեդական տեսական փորձը նոր գիտահետազոտական փաստերով:

Վերոնշյալ վերլուծությունն էլ ավելի է կարևորում հետազոտության գործնական նշանակությունը, ինչը ԱՍԽ ունեցող երեխաների հետ կազմակերպվող լոգոպեդական վաղ միջամտության մեթոդների արդյունավետության բարձրացմանն ուղղված և առաջարկվող մանկավարժական պայմանների գործնական մշակումն ու դրանց ներդրումն է մանկավարժական գործընթացում՝ լոգոպեդական վաղ միջամտության մոդելի համալիր ծրագրի միջոցով: Մշակված լոգոպեդական վաղ միջամտության մոդելը ներդրված է «ԱրԲԵՍ» առողջության կենտրոնի լոգոպեդական պրակտիկայում, իսկ առաջարկված գործնական և ծրագրային նյութերը (խաղային առաջադրանքներ, վարժություններ, հնարներ, խորհուրդներ, պայմաններ, երեխայի տարիքային և խաղի զարգացման սանդղակներ) մեր կարծիքով կարող են գործածվել նախադպրոցական տարիքի (0-6 տարեկան) ԱՍԽ ունեցող երեխաների հետ կազմակերպվող լոգոպեդական միջամտության գործընթացում՝ հնարավորինս վաղ (0-3 տարեկան) միջամտության կազմակերպման շեշտադրմամբ: Մենք կարևորում ենք մասնագիտացված հաստատություններում իրականացված ուսումնավերականգնողական աշխատանքների արդյունավետության բարձրացման մանկավարժական դիտումները և լոգոպեդական գնահատումները, որոնք հնարավորություն են ստեղծում համակարգելու աուտիզմի սպեկտրի խանգարումների հաղթահարման համալիր ծրագիրը:

Հետազոտության հիմնական դրույթները, արդյունքները և հետևությունները 2019-2023 թվականներին քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի

«Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի» ամբիոնի նիստերում, «ԱրԲԵՍ» առողջության կենտրոնի մասնագիտական սեմինարներում, հեռուստաթերների ընթացքում: Իրականացված դիտարկումների և հետազոտությունների արդյունքների հիման վրա տպագրված հոդվածները տեղ են գտել հայկական և միջազգային գիտական ամսագրերում, հեղինակային՝ հրատարակված աշխատություններում:

Վերոնշվածով պայմանավորված կարելի է եզրակացնել, որ Քրիստինա Արսենի Խառատյանի «Լոգոպեդական վաղ միջամտության մոդելը աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում» թեմայով ատենախոսական աշխատանքը թե տեսական, թե գործնական առումով ամփոփ ներկայացնում է ՀՀ-ում գործող վերականգնողական և զարգացնող տարբեր կենտրոններում իրականացված բացառիկ ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը, ըստ որի բացահայտված է ԱՍԽ ունեցող երեխաների հետ աշխատանքի համալիր մեթոդական միջամտության համար նախատեսված տեսական և գործնական գործիքակազմը մեր երկրում:

Ատենախոսությունը շարադրված է 161 էջ համակարգչային տեքստով, կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը պարունակում է 14 աղյուսակ, 20 տրամագիր, 1 գծապատկեր, 1 նկար և 9 հավելված:

Վերլուծելով Քրիստինա Արսենի Խառատյանի «Լոգոպեդական վաղ միջամտության մոդելը աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում» թեմայով ատենախոսական աշխատանքը, հեղինակի գործնական փորձը, ինչպես նաև քննարկվող հարցերի վերաբերյալ ունեցած նրա տեսական և գործնական պատրաստվածությունը, ինչպես նաև՝ ԱՍԽ ունեցող երեխաների հետ աշխատանքի համալիր մեթոդական միջամտության համար նախատեսված տեսական և գործնական գործիքակազմի գրագետ մշակումը, մենք կարևորում ենք այս համակարգում իրականացված տեսագործնական աշխատանքը, ԱՍԽ ունեցող երեխաների խոսքի ձևավորմանն ու զարգացմանն ուղղված համակարգային մոդելի, լոգոպեդական վաղ միջամտության մանկավարժական պայմանների առաջադրումը և փորձարարական ճանապարհով հիմնավորված՝ առաջարկվող մոտեցումների կիրառման արդյունավետությունը:

Մեր համոզմամբ, ԿԱՊԿ ունեցող երեխաների համընդհանուր ներառման կրթական միտումն, այսօր, ենթադրում է նոր միջոցների, մեթոդների մշակում և դրանց կիրառման

համապատասխան պայմաններ, ինչն իր աշխատանքով կարողացել է ապացուցել Ք.Խառատյանը:

Ամբողջապես դրական գնահատելով Քրիստինա Արսենի Խառատյանի «Լոգոպեդական վաղ միջամտության մոդելը աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում» թեմայով ատենախոսական աշխատանքն, այնուամենայնիվ հարկ ենք համարում առանձնացնել հետևյալ դիտարկումներն ու բացթողումները.

1. Մեր կարծիքով հետազոտությունն ավելի կշահեր, եթե բժշկական ոլորտի մասնագետների կողմից իրականացվող ախտորոշիչ միջամտությունը ներկայացվեր ավելի մանրամասն, քանի որ երեխայի ուղղորդումը հաջորդ՝ վերականգնողական թերապիայի՝ նեղ մասնագիտական միջամտության մեծամասամբ ենթադրում է փուլային աշխատանք, որում ներկայումս կարևորվում է լոգոպեդական հետազոտության և առաջնային գնահատման խնդիրը:

2. Հետազոտությունն էլ ավելի արժեքավոր կլիներ, եթե ԱՍԽ ունեցող յուրաքանչյուր երեխային տրամադրվող աջակցող ծառայություններում լոգոպեդական միջամտության ժամանակահատվածը, տևողությունը, ծավալը և տրամադրման գրաֆիկը մշակվեր հաստատության աջակցության խմբի կողմից և ըստ հեղինակի կողմից առաջադրվող մոդելի լիներ պարտադիր, որը և լոգոպեդական ծառայությունների տրամադրման արդյունավետության և որակի ապահովման հիմք կհանդիսանար:

3. Հավելվածում ներկայացված լոգոպեդական հետազոտության և առաջնային գնահատման փուլի բացատրական թերթիկը կարելի էր ներկայացնել ավելի ծավալուն, ինչը երեխայի սոցիալական շփման հնարավորությունների և հաղորդակցման մակարդակի գնահատման առումով հարբժշկական մասնագետների աշխատանքի համար ևս կունենար որոշակի նշանակություն:

4. Ատենախոսությունում կան առանձին մտքերի կրկնություններ, անճշտություններ /էջ 24; 35; 81, 115 և այլն/:

Նշված դիտողություններն ու բացթողումներն, սակայն, չեն իջեցնում ատենախոսական աշխատանքի իրական արժեքը, այն ինքնուրույն, ավարտուն և գիտական աշխատանք է, որն էլ առանձնանում է իր արդիականությամբ, նորույթով, տեսական և գործնական նշանակությամբ: Կարելի է հավաստել, որ ատենախոսության հիմնական դրույթները, հետևությունները և արդյունքները լրացնում են հատուկ մանկավարժական/լոգոպեդական առաջավոր փորձը գիտահետազոտական նոր փաստերով:

Քրիստինա Արսենի Խառատյանի հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորումը շեշտադրված է տարբեր բնագավառների գիտական նվաճումների վրա հիմնված մեթոդոլոգիական մոտեցմամբ, հետազոտության խնդիրների և ուսումնասիրվող դրույթների բնույթին համապատասխան համակարգային մեթոդների կիառմամբ, վիճակագրական ժամանակակից մեթոդների կիրառմամբ (Բաց հասարակության հիմնադրամներ՝ հայաստանյան գրասենյակի «Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների» կենտրոնի 2019թ. և ՅՈՒՆԻՍԵՖ՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ 2020թ.), հետազոտվողների բավարար քանակակազմով, անցկացված աշխատանքի ծավալով, հետազոտության ժամանակակից և համապատասխան մեթոդների կիրառմամբ, փաստացի փորձարարական նյութերի վիճակագրական մշակմամբ, ստացված որակական և քանակական արդյունքների ներդրմամբ:

Ատենախոսության սեղմագիրը և գիտական հրապարակումները վկայում են աշխատանքի հիմնական դրույթները:

***Վերոնշյալը թույլ է տալիս կատարելու հետևյալ ընդհանուր եզրակացությունը.***

Քրիստինա Արսենի Խառատյանի «Լոգոպեդական վաղ միջամտության մոդելը աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում» թեմայով ատենախոսական աշխատանքը ինքնուրույն, ավարտուն գիտական հետազոտություն է, տարբերվում է իր նորույթով, տեսական, գործնական և սոցիալական նշանակությամբ:

Հետազոտության հիմնական դրույթները, հետևությունները և արդյունքները, մասնագիտական սեմինարների, վերապատրաստման և դասախոսությունների մշակման նպատակով, կարող են հիմք հանդիսանալ ինչպես Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դասախոսների, այնպես էլ՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Ֆիզիկական վերականգնման, ՖԴՏ, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող նոր հետազոտությունների և գործնական փորձի ներդրման համար: Կարծում ենք, որ ուսումնավերականգնողական աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված հեղինակի մանկավարժական դիտումները և գնահատումները հնարավորություն են ստեղծում համակարգելու լոգոպեդական առաջադրվող մոդելի ուղղվածության և լոգոպեդական ծառայությունների տրամադրման արդյունավետության գործընթացը, իսկ ԱՍԽ ունեցող երեխաների ուսուցման, դաստիարակության, բազմակի

կարիքների հաղթահարման և հաղորդակցման ապահովմանն ուղղված մոդելի կիրառումը նպաստում է նրանց հաղորդակցման և խոսքի զարգացման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Սույն ատենախոսությունը ԱՍԽ ունեցող երեխաների ուսուցման, դաստիարակության, բազմակի կարիքների հաղթահարման և հաղորդակցման ապահովմանն ուղղված՝ հայերեն լեզվով գրված միակ աշխատանքն՝ հարուստ մեթոդական ցուցումներով և հանձնարարականներով, ինչն առանձնապես ընդգծում է լոգոպեդական վաղ միջամտության արդյունավետությունը, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և իր ԺԳ.00.03 «Հատուկ մանկավարժություն» (Լոգոպեդիա) մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսը լիովին արժանի է գիտական աստիճանի հայցման:

Ք. Ա. Խառատյանի կողմից ներկայացված ատենախոսական աշխատանքը քննարկվել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի 30.03.2023 թվականի թիվ 8 նիստում: Նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ, ՄԳԹ դոցենտ՝ Ա. Գ. Ստեփանյանը, դոկտոր պրոֆեսորներ՝ Ֆ.Գ. Ղազարյանը, Ե.Ս. Հակոբյանը, ՄԳԹ, պրոֆեսոր՝ Ս.Հ. Հովեյանը, ՄԳԹ, դոցենտներ՝ Ա.Վ. Պողոսյանը, Ա.Հ. Պատվականյանը, Ա.Հ. Շախյանը, Թ.Լ. Մկրտչյանը, Թ.ՅՈՒ Ազատյանը, ՄԳԹ ասիստենտ՝ Մ.Ս. Բարբարյանը, դոցենտներ՝ Ե.Ն. Նահապետյանը, Յու.Գ. Գրիգորյանը, ասիստենտներ՝ Ս.Գ. Խաչատրյանը, Գ.Մ. Պապանյանը, Ս. Ջեյրանյանը, Ա.Ա. Կովալյովան, գործավարներ՝ Զ. Պիրոյանը, Ն. Նուշիկյանը:

Քննարկման արդյունքում՝

Կողմ՝ 16

Ձեռնպահ՝ 0

Դեմ՝ 0

Անցավ միաձայն:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քրիստինա Արսենի Խառատյանի «Լոգոպեդական վաղ միջամտության մոդելը աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում» խորագրով ատենախոսությունը հայերեն լեզվով գրված եզակի աշխատանքներից է՝ հարուստ մեթոդական ցուցումներով և հանձնարարականներով, ինչն առանձնապես ընդգծում է լոգոպեդական աշխատանքի արդյունավետությունը, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և իր ԺԳ.00.03 «Հատուկ մանկավարժություն» (Լոգոպեդիա) մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսը լիովին արժանի է մանկավարժական գիտությունների գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՖԿՍՊԻ ֆիզիկական դաստիարակության տեսության,
մեթոդիկայի եվ ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի
ամբիոնի վարիչ ՄԳԹ, դոցենտ՝ Ա. Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀՖԿՍՊԻ ֆիզիկական դաստիարակության տեսության,
մեթոդիկայի եվ ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի
ամբիոնի ՄԳԹ, պրոֆեսոր՝ Ս. Հ. ՀՈՎԵՅԱՆ

Հավաստում եմ՝ դոցենտ Ա.Գ. Ստեփանյանի և պրոֆեսոր Ս.Հ. Հովեյանի ստորագրությունները.
ՀՖԿՍՊԻ գիտական քարտուղար
ՄԳԴ, պրոֆեսոր՝ Ա. Ա. ՉԱՏԻՆՅԱՆ

31 մարտի 2023թ.